

Կ. Պոլսեցի Յարութիւն Արհիեպս. Կեսարիոյ Պաղեստինոյ հաստատեմ զվերոյգրեցեալս. . . եւ այլն (Schiarimenti, Venezia, էջ 67—74). 1724ին վերջերը Յարութիւն Արքեպ. Վենետիկէն Հռոմ գնաց՝ 1725ի Քահանայապետական մեծ Յոբելինին մասնակցելու (Թղթ. ինքնագիր Մխիթար Աբրահամ առ Յովնան Արքեպ.ի Հռոմ, 4 Նոյ. 1724. Դիւ. Անտոնեանց ի Կ. Պոլիս):

Հայոց Եկեղեցւոյ մէջ Վարդապետական աստիճան տալու մասին՝ 1727ին Հռոմայ Ս. Ժողովը քննութիւն մը կատարեց եւ մասնագէտներէն տեղեկութիւն ուզեց: Խաչատուր Վ. Էրզրումեցի Առաքելեան՝ Նշանաւոր քարոզիչ յարեւելս եւ Աստուածաբան, լատիններէն նամակ մը գրած է 7 փետր. 1728 թուականաւ առ Ս. Ժողովն, որուն մէջ բաց ի շատ կարեւոր տեղեկութիւններէ՝ կը յիշատակէ նաեւ մեր Յարութիւն Արքեպիսկոպոսը (ընագիր ի Վատիկանեան Մատենադարանի ձեռ. Vat. lat. Թիւ 7262, էջ 290) իրեն ժամանակակից ուրիշ անձինքներու հետ. այսինքն՝ «Յովհաննէս Կաֆայեցի Արքեպ., որ Հռոմայ մէջ տուաւ վարդապետութիւն Մելքոնի աշակերտի Ուրբանեան Դպրանոցի, որ յետոյ Եպիսկոպոս ըլլալով՝ Պոլիս նահատակուեցաւ վասն հաւատոյ (1714. փակագծեալք ինծմէ): Յարութիւն Արքեպ.՝ որ հիմայ Վենետիկ կը նստի, Իսրայէլ եւ Յովհաննէս աշակերտաց Ուրբ. Դպրանոցի՝ վարդապետութիւն տուաւ Դպրանոցի եկեղեցւոյն մէջ: